# <<ԱՐԱԲԿԻՐ>> ՄԱՆԿԱԿԱՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ ՓԲԸ
# CHILDREN POLICLINIK "ARABKIR"

ՀՀ, Երևան 12, Փափազյան 32, հեռ. 26-11-31,
e – mail arabkir-mankakan@rambler.ru


18 հունվար 2017թ.

N - 357

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/4» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակիցներ

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/4» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Արաբկիր» մանկական պոլիկլինիկա ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանք(ներ):

Ապրանքների մատակարարման պայմաններն են՝

Գնման առաջարկում ներկայացված գինը պետք է ներառի բեռնափոխադրման, բեռնաթափման արժեքը, հարկերը, ապահովագրությունը և հնարավոր այլ ծախսերը: Դեղորայքը պետք է ունենա առնվազն 2-3 տարի պահպանման ժամկետ (պայմանագրի նախագիծ):

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում *« ԱՄՊ-ՇՀԱՊՁԲ-17/1»:*

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Փափազյան 32 հասցեով, մինչև 2017թ. Հունվարի 30-ը, ժամը 13:00-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղարը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն «Արաբկիր» մանկական պոլիկլինիկա ՓԲԸ շենքում, ք. Երևան, Փափազյան 32 հասցեով, 2017թ. Հունվարի 30-ը, ժամը 13:00-ն:

Գնման առարկա է հանդիսանում "Նոր Արաբկիր» ԱԿ ՓԲԸ-ի կարիքների համար՝ դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերումը:

«Արաբկիր» մանկական պոլիկլինիկա ՓԲԸ -ի կարիքների համար՝ դեղորայքի և պատվաստանյութերի մատակարարման (որը կազմված է՝_62_ չափաբաժից) տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) կից:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնման ընթացակարգին սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին (Հավելված N 2):

գ. <<Մասնագիտական փորձառության>> վերաբերյալ:

դ.<<Տեխնիկական միջոցներ>> վերաբերյալ

ե. <<Ֆինանսական միջոցների>> վերաբերյալ:

զ.<<Աշխատանքային ռեսուրսներ>> վերաբերյալ

է. գնային առաջարկ (Հավելված N 4): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

ը. Հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերի համապատասխանության վերաբերյալ (Հավելված N 4.1):

թ. Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանքներ մատակարարելու դեպքում (Հավելված N 4.2):

ժ. հրավերով ներկայացված փաստաթղթերի համապատասխանության վերաբերյալ (Հավելված N 5):

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/4 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

«Արաբկիր» մանկական պոլիկլինիկա ՓԲԸ -ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ hasmik-20@mail.ru:

**Տնօրեն** **Ա. Նարգիզյան**

Կատարող՝ Հ.Գևորգյան
Հեռ.՝ 077919157